նոյն միջոց ժամանակին՝ Հայոց բազմադարեան Ս. Սարգիս եկեղեցին կը մնայ իւր սեպհականութիւն, և մինչև ցայսօր կանգուն գրեթէ նոյն ձևով՝ ինչպէս ասկէ ութ հարիւր տարի յառաջ։ Եկել են ի Կաֆա Կազարք և Սարմատացիք, Թփչաղ և Գոման Թաթարք, և այլն, քարուքանդ արել են քաղաքը իւր մեծամեծ չէնքերով, այլ կարծես թէ քանդողաց աչքէն վրիպել է սուրբ տաճարս իր անփառունակ ձևովը. օտարաց աչքին անՆչան, այլ ազգիս՝ մանաւանդ Կաֆայեցի Հայկազանց համար յոյժ սիրելի և նշանաւոր. և պէտք է որ միշտ այնպէս լինի՝ իր դարերէ ի վեր ունեցած հնութեամբ և արժանաւոր արուեստակաղ անուամբ անդրստին ի հնոց։ Անշուշտ չինողք տաճարիս, խոհական խորհրդով նախագուշակելով ապագայ աւերումունք և արկածք, զգուշացել են, ինչպէս յառաջ ալ կանխեցինք ըսել, խորանաց կամարները բարձրացընելու, ինչպէս այլ եկեղեցեաց. չունի եկեղեցիս երկնաբերձ կաթողիկէ՝ վեղարի ձևով, ինչպէս ունին յետաչէն եկեղեցիք։ Առաջին գաղթական Հայք ի Թէոդոսիա, քաղաքիս մէջ տեղը, շրջապատեալ ընդարձակ բակով, քարաչէն պարըսպաց մէջ չինել են ի ցածագոյն տեղւոջ, խոնարհ սրբավայրը, որպէս զի կարող լինին, առանձնացեալ յօտարաց, առանց աչքի զարնուելու, ժողովիլ սուրբ տաճարիս մէջ, կորուսեալ հայրենեաց սէրը նորոգելու, նախնի հարց և վարդապետաց լեզուով և հնագոյն արարողութեամբ իրենց յարգութիւնն ու գովաբանութիւնը, սրտի և հոգւոյ պիտոյքը, վիշտերը և ցաւերը հեղլու և տարածանելու առաջի երկնաւոր Թագաւորին, որ ամէն տեղէ, ամէն լեզուով, իրեն դիմողաց ձայնը կը լսէ, կարեաց դար-